

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՌՅԿԲ-ՌՅԿԳ


ՀԱՏՈՐ

2

1923

ՄԱՅԻՍ

ԹԻԻ 5



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԵՐ. ՏՆ. ԿՈՄԻՏԱՍԱՅ ՎԿԱՅԻՆ

(տես Բազմավեպ 1923 էջ 107)



Սահմի ԺԶ, և Հոկտեմբերի ԻԵ՛՛
Վկայարանությունն սրբոյ նոր Նստաւա-
կին կոմիտատայ սրբանունը քանանային, որ
կատարեցաւ ի կոստանդինուպոլիս:

«Մենք և ահաւոր և սքանչելի է խոր-
հուրդ Արարչին մերոյ Յիսուսի Քրիստո-
սի, ի վեր քան զտեսութիւն մտաց և աշաց,
որ յայսմ ժամանակի ընտրէ իւր արժա-
նաւորս, և անպատում փառացն հաղորդս
առնէ: Փանղի տէր է ժամանակաց, և ա-
մենայն արարածը նմա հնազանդին:

«Արդ՝ որպէս զանքան տունկ և զրոյսս
ի պատիւ մարդոյս զարդարեաց, այսպէս
և մարդս, որ է բանաւոր տունկ, ի պատ-
կեր իւրոյ բարերարութեանն և ի փառս
տիրական իշխանութեանն շքեղ զարդա-
րեաց, Եւ որպէս զմարդս ի վերայ զլոյսը»

և տնկոց զուարճացոյց, այսպէս և Աս-
տուած ի բանաւոր տունկս եկեղեցւոյ փա-
ռաւորի, որպէս ասէ Սողոմոն. Աստուած
փառաւորեալ է ի խորհուրդս սրբոց իւրոց:
Եւ որպէս տունկն իւրացանչիւր ժամա-
նակի տայ զպտուղս, այսպէս և սուրբք
ի մարդկանէ յայսմ ժամանակի տան
զպտուղս առաքինութեան բարերարին Աս-
տուծոյ. ըստ այնմ՝ որ զպտուղ իւր ի
ժամու տացէ: Քանզի յամենայն ժամա-
նակի զեղեցիկ պտուղք և ախորժելիք
մարդկան, այլ ևս առաւել փափաքելի է,
յորժամ նորահաս լինի և կամ հասեալ
լինի ի ծառոց, ևս առաւել ի ժամանակիս:

«Այսպէս և ամենայն սուրբք հաճոյ են
Աստուծոյ, և ժառանգորդք արքայութեանն,
որպէս ծաղիկք եղեն աւետարանին Քրիս-
տոսի երայն նախավկայն սուրբն Ստե-



փաննուս։ Եւ յերեկոյացեալ ձմեռնային
հողանակս, յորում հասեալ է պտուղ բա-
րութեան ազգէ մարդկանէ, յայսմ սառու-
ցեալ և ցամաքեալ բազմավիշտ և դժեհա
ժամանակիս երեցեալ զեղեցկատիպ և ա-
ռաքինասէր, ըրիստոսազգեաց և աւետա-
րանական խաչին հետևողն, և մեծ պա-
տուական նահատակն Քրիստոսի սուրբն
կոմիտաս քահանայ։

«Արդ՝ երանելի քահանայս այս էր ի
կոստանդինուպօլսոյ, գոլով որդի քահա-
նայի՝ որ մականուամբ Քիոմուրճի տէր
Մարտիրոս ձայնիր։ Եւ էր եկեղեցւոյ սրբ-
բոյն Գէորգայ որ ի Սուլումանաստիր, ու-
սեալ և վարժեալ ի տեառնէ Մինասայ
վարդապետէ ամթեցւոյ։ Սա ձեռնադրեալ
եղէ քահանայ՝ պատուականի որդի տէր
Կիրակոս վարդապետէ առաջնորդէն Եւդո-
կիոյ։ Երանելիս այս էր հմուտ հին և նոր
կտակարանացն աստուածային գիտութեամ-
բըն, և փիլիսոփայական ճոխութեամբն, և լի
ամենայն աստուածաբանական իմաստու-
թեամբ։ Եւ էր ի ժամանակս կաթողիկոսու-
թեան տեառն Աղեքսանդրի ջուղայեցւոյ,
և ի առաջնորդութեանն կոստանդինուպօլ-
սոյ Յոհաննէսի վարդապետի իզմիրցոյ,
և սորին փոխանորդի Մարկոս իրիցոյ, որ
մականուամբ կոչիր Չամիչ Ֆունտուի։

«Եղև զի անկաւ մեծ խռովութիւն ի մէջ
ազգին Հայոց։ Թէպէտ իօքն ամաւ յառա-
ջագոյն գոյր խռովութիւնս այս, սակայն
յայսմ ամի առաւել հրդեհեալ բորբոքե-
ցաւ։ Վասն զի ոմանք չարածճիկք և ա-
նօրէնք, անազորունք և անհաւանք, կա-
շառառուք և աշխարհաւերք սուտանուն
ըրիստոնեայք, խաբէութեամբ և ստու-
թեամբ արզ և մահաւար արաբեալ, յղեցին
առ կաթողիկոսն վերոյ յիշեալ Աղեքսանդր,
և խնդրեցին զայս իզմիրցի Յոհաննէս
վարդապետն առաջնորդ կոստանդինուպօլ-
սոյ։ Եւ սա առաքեալ ի նմանէ՝ եկն ի
կոստանդինուպօլիս ՌճՄՁ Թվին Հայոց՝
Օգոստոսի իննին։ և ի սեպտեմբերի ամսոյ
իօրին էառ զպատրիարքութիւնն բազում
կաշառօք ի ձեռանէ Սահակ վարդապետին
Աղուշեցւոյ։

«Եւ ի նստիլն սուրբ Աստուածածնի յե-
կեղեցւոյ մինչ Լ աւուրք՝ ձևացուցանէր
զինքն զաղտագողի և աղուեսաբար հաշ-
տարար և խաղաղացուցիչ խռովութեանց.
իբր երեկեցուցանէր՝ թէ ճշմարիտ խաղա-
ղարար է։ Որ և ի մէջ քարոզի և ծա-
նուցումն ասէր, թէ Հոգևոր տէրն առաքեալ
զիս խաղաղացուցանել զվրդովեալ ժողո-
վուրդն։ Այսպէս ասելով՝ հաւատացուցա-
նէր զվիսամիտ ժողովուրդն։ Բայց ինքն
զաղտ և ծածկաբար ի դրունս արքունեաց
ղեգերէր, և զորոգայթս պատարաստէր ան-
մեղ ժողովուրդեանն, խոստանալով կաշառս
բունաւորաց, զի հրաման առցէ ըմբռնել
զանմեղ ըրիստոնեայս, և ցիրուցան առ-
նել զերամս սուրբ Լուսաւորչին։ և զսուրբ
հօտն Քրիստոսի, որ առ ինքն յանձնեալ
էր, խածատէր և փեռեկէր, և ի բերանս
զայլոց արկանէր։

«Արդ ի ընդունելիս հոկտեմբերի ամսոյ
առեալ հրաման յամիրայէն, յանկարծակի
անկասկած ումեքն եղեն սուտ ըրիստո-
նեայքն ի կերպարանս այլազգաց. ելին ի
փողոցս և ի շուկայս ըմբռնել զանմեղ ըրիս-
տոնեայս, որ և ըմբռնեցին աւելի քան
զքառասուն անձինս, և տարեալ բանտեցին
ի պալատն ամիրային՝ պնտեալ ի կռնիցս
և ամբացուցեալ, որք և էին ազնուատուճք
և անուանիք և մեծատունք։ Աստ կատա-
րեցաւ ասացեալն փրկչին մերոյ Յիսուսի՝
թէ Յարիցն ազգ ազգի վերա, և սյլն։
Եւ յայնժամ եղաք ծանակ և նախատինք
այլ ազգաց և ամենայն ըրիստոնէից, վասն
զի ահն աստուածային բարձաւ ի միջոյ,
ամօթն և պատկառանք վերացաւ, և սէր
Քրիստոսի սպառնեցաւ։ Այս ամենայն եկն
ի վերայ մեր վասն մեղաց մերոց։ Քանզի
զոմանս ի բանտ մատնեցին, զոմանս բրա-
ծեծ արարին և զոմանս ի սուրբ հաւատոյ
հանեցին, և զբազումս ի քիւրճկն մատնե-
ցին։ Եղբայր զեղբայր մատնէր և հայր
զորդին, էրէցն զքահանայն, աղքատն զմե-
ծատունն։

«Այսպէս լի եղև խառնակութեամբ և
խռովութեամբ քաղաքս այս Ըստամպօլ։
Չի տգէտքն և արժաթատէրք քահանայիցն,

որ առաւել սիրեցին զփառս իւրեանց քան զփառս Աստուծոյ, վասն այնորիկ զանմեղ ժողովուրդն իբր թէ հաւատացուցին՝ աւելով. Նոքա զսուրբ Լուսաւորիչն ուրացեալ են, և հերժուածողք են եղեալ: Իսկ իւրեանք անուամբ Լուսաւորչի ձեռնան, սակայն զործովք հեռացեալք են ի նմանէ: Քրիստոնեայք անուանին, բայց զործովք ուրացեալք գտանին:

«Այն վերոյիշեցեալ Յովանէս վարդապետն յառաջմէ նախանձ և խէթ ունէր ընդ տէր Կոմիտասին՝ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ: Չ ամաւ յառաջ հանդիպեալք լինէին ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, և լոյսեղբայր կոչեցեալ լինէին. և վասն ի մասսութեան նորին մախալը միշտ հաւնապազ, և խնդրէր հանապազ հնարիւք բառնալ ի կենաց: Եւ յայս խոռովութեան ժամանակի փափաքանաց սրտին եհաս: Եւ ի սոյն երեքշաբաթի գիշերի երբորդում ժամու, որ էր հոկտեմբերի ի Վին, վերոյ սասցեալ Յովանէս պատրիարքն, որ էր հովիւ, եղև ի կերպարանս գայլի. փոխեաց զգետն իւր և եմուտ ի կերպ զինուորի. առեալ զզունդն մունջուր աղայի և բելիարի՝ որ համարո՞ւ էր սոյն լրբի, այլ և զնդնն ամիրայի սպասաւորացն եպարքոսի, գնացեալ ի դուռն տէր Կոմիտասին, կոտորատեալ զդուռն՝ մտին ի ներս, և ըմբռնեալ զնա՝ երես ի քարշ ի դուրս հանին:

«Իսկ երանելին աղաղակեաց իբրև գառն անմեղ, ասելով՝ թէ Թոյլ տուք սակաւիկ մի, զի մտեալ ի ներս՝ զգննուցում զհանդերձս իմ: Իսկ անողորմքն ոչ ետուն նմա Թոյլ. այլ ինքեանք մտին ի ներս և հանին զհալաւն, և ագուցին նմա: Եւ Յովանէս վարդապետն այն ուժգին եհար ապտակս ընդ երեսն նորա, որ և երկու ատամունքն ի բաց ոստեան: Այլ և ոմանք աքցի ի բռնցի հարկանէին: Իսկ սուրբն ոչ տուեալ պատասխանի, այլ խոնարհեցուցեալ ըզգլուխն առաջի նոցա՝ գնայր ընդ նոսա մինչ ի դուռն Չամիչ ֆնտուխ կոչեցեալ իրիցոյն, և անդ առնէին դադար, և ուրախութեամբ ըմպել խնդրէին զգինի, և փութով

իջուցեալ զեխէին ուրախութեամբ, պար առնէին, և օրհնեալ երեսն թքանէին. և տարեալ ի դուռն ամիրային եղեալ ի բանտ՝ զդուռն կնքեցին:

«Իսկ ի լուսնալ առաւօտին, որ էր օր չորեքշաբաթին, եղև հրաման ամիրայէն հանել զտէր Մատթէոս կաթողիկոսն ի թէրխանայէն և ածել առաջի ամիրային, որ և մի ամաւ յառաջ էր ի քիւրէկն ընդ այլ քրիստոնեայս: Եհարց ամիրայն ցկաթողիկոսն և ասէ. Ո՞վ արար զքեզ փաթրիզ: Եւ նա զնացեալ ի մօզուր աղայի թմուրլին, եցոյց մատարն իւրով զանուանիսն և զմեծատուն իշխանն, որք անդ մէկ աւուրք բանդեալք էին: Յայնժամ հրամայեաց ամիրայն կացուցանել զնոսա յատեան առաջի իւր: Եհարց աւմիրայն առ նոսա և ասէ. Յորժամ կաթողիկոսն փաթրիք կացուցիք, զԱւետիք փաթրիքն զհնչ արարիք: Իսկ նոքա պատասխանեալ ասացին, թէ Միւս ամիրայն եղբայրն քո՝ որ յառաջ քան զքեզ էր, նա մանզուլ արար և աքսորս առաքեաց:

«Յայնժամ սրտմտեալ ամիրայն, ձայնեալ զդահիճն՝ ետ ի ձեռս նորա զի զխառտեցէ: Եւ առեալ դահիճն զնոսա, մինչ իջուցանէր ի յաստիճանէ բեմին, յայնժամ չաւուշ պաշին ընթեր գլով ընդ նոսա, ասաց ցկաթողիկոսն. Եկ տաճկացիք, և լինիցիս մօլլայ, և ազատիս ի մահուանէ: Իսկ խեղճ և թշուառն այն մոռացեալ զսէր արքայութեանն և զահ զժոխոցն, ոչ ևս ի միտ ածելով զկարգ քահանայութեանն, վարդապետութեանն, եպիսկոպոսութեանն և կաթողիկոսութեանն, որ քանիցս անգամ մեռոն օրհնեալ, անթիւ քահանայս և վարդապետս և եպիսկոպոսունս ձեռնադրեալ, զամենայն մոռացեալ եղկելին՝ եղև ուրացող Քրիստոսի, և զկնկուղին ի զլիպոյն էջարկ ի գետինն, և կոխեալ ընդ ոտիւքն՝ եղև մոռսւրման, այս ինքն այս լազգի:

«Իսկ ընկերքն որ ընդ նմա, տեսեալ զայն՝ զի է կաթողիկոս և զլուխ օրինաց, ինքեանք ևս հետեցեան նմա և ուրաքան զՔրիստոս: Սոքա էին որք ուրացան ան-

ծինք տասն, ամուսնացեալը և ճոխացեալը որդուվը և դստերօր: Տեսէք, եղբայրք, թէ որքան հոգիք կորեան և ճեղքեցան ի հօտէն Քրիստոսի: Վասն որոյ ասէ տէրն մեր Յիսուս. Վայ մարդոյն այնմիկ՝ որոյ ձեռն զայթակողութիւն զայցէ: Իսկ թէ վասն միոյն վայ տայ Քրիստոս, ո՛րչափ ևս վասն այսքան անձանց՝ որք կորեցան ի յանգամոցն Քրիստոսի, այնորիկ որք եղեն պատճառ սոցա կորստեան, տալոց են զհամարս առաջի անաչառ դատաւորին Քրիստոսի:

«Աւղ եկեցուք երանելի տէր Կումիտասս, որ միաց գիշերն ի բանչի. աղօթմ մատուցանէր և ասէր արտասուածոր աչօք և բարձր ձայնիւ. Տէ՛ր, մի համարիր սոցա զայս մեղս, զի ոչ գիտեն իրնչ գործեն: Եւ զկնի ուրանալոյն նոցա հանեալ ի բանտէն զտէր Կումիտասս՝ ածեն առաջի ամիրայիւն, հանդերձ իւր եկեղեցւոյ քահանայութիւն և վարդապետութիւն: Եւ հարցեալ ամիրայն ասէ. Զի՞նչ ամբաստանութիւն ունիք զքահանայս աշխմանէ: Թայմամ սկսան խաժատել չար քահանայքն, ասելով, թէ Թոսանկ է և հերժուածօղ, հակառակ օրինաց մերոց: Իսկ ամիրայն հարցանէր առ սուրբ քահանայն և ասէր՝ թէ ի՞նչ ազգէ ես: Իսկ սուրբն պատասխանեալ ասաց. Ազգաւ հայ եմ և հաւատով ջրիս տոնեա. լուսաւորչաւանդ ըռայեայ եմ և խարոճկիւզար: Իսկ քահանայքն չար՝ բարձրածայն գոչեցին ասելով միարեբան. Բարձ զդա ի մէնջ, զի հակառակ է օրիւնաց մերոց:

«Եւ յորժամ եղև այս, տարեալ միւսան՝ զամ արկին ի բանտ: Իսկ ի լուսանալ հինգշաբթի՝ կրկին ածին զնա յատեան, և ասեն՝ թէ Մահապարտ է, բարձ զդա ի միջոյ մերմէ: Իսկ ամիրայն առաքեաց մինն ի սպասաւորաց իւրոց առ մուհտին իւրեանց, և խնդրեաց ֆէթվայ վասն մահուան քահանային: Իսկ նա ոչ ետ գիր մեռուցանելոյ, ասելով՝ թէ ոչ է պարտ դմա մեռանիլ. զի օրէնքն մեր ոչ դատէ զայդ մարդն ի մահ: Յիշեաց զնա առ այլ դատաւորսն, զի նոքա տայցեն վճիռ սպան-

ման՝ նոքա ևս հրաժարեալը՝ ասացին թէ Անպարտ եմք մեք յարենէ դորա, և նա շէրի է բանդ աղոյ:

«Տեսեալ ամիրան թէ ոչ ետուն գիր սպանանելոյ, առաքեաց զտէր Կումիտասն հանդերձ սուտ վկայութիւն, այս ինքն իրիցօք և վարդապետօք և փաթրիքիւն՝ ի դատաւորին Ղալաթիոյ, ասելով՝ թէ լուր վկայիցն, և զվճիռն տուր զլիստման: Գնացեալք առաջի դատաւորին՝ յատեան կանգնեցան. և սկսաւ դատաւորն հարցանել ցըրիստոնեայս որք էին ի Ղալաթիա, թէ Որպէս գիտէք զքահանայս զայս. ֆոսնիկ է թէ էրմէնի: Իսկ նոքա պատասխանեալ ասացին, թէ Մեր անպարտ եմք, և ոչ գիտեմք զդա ֆոնէկ, այլ քահանայ Հայոց ճանաչեմք զդա:

«Եւ յորժամ անդ ոչ գտին սուտ վկայս, իւր եկեղեցւոյ իրիցունքն մոմեալ յառաջ մատեան, և սկսան սուտ վկայիլ՝ թէ Մահապարտ է և ֆոնէկ: Ուրոց յառաջ մատուցեալ չորս քահանայք՝ վկայեցին. առաջինն՝ Սահակ էրէց, Զուհւայ կոչեալ՝ կեսարացի. երկրորդն՝ Յակոբ էրէց, մականուամբ Գոմէշ. երրորդն՝ Ալեքսան էրէց, մականուամբ Տաւաճանճի. իսկ չորրորդն՝ Մարկոս էրէց, մականուամբ Զամիշ ֆունտուի: Եւ յորժամ վկայեցին այս չորեքէին զազանքս ի վերայ անմեղ գառինն, յայնժամ սկսաւ դատաւորն հարցանել ցտէր Կումիտասն և ասէ. Դու զի՞նչ ասես. լսես թէ ի՞նչ ամբաստանեն զքէն: Իսկ երանեւ լին պատասխանեալ ասաց. Ով դատաւոր, ես անպարտ եմ յայդմ բանէ. զի ես էրմէնի եմ և լուսաւորչածին ջրիստոնեայ և Քրիստոսի ծառայ: Անէ դատաւորն ցդատախազ իրիցունսն. Ըստ օրինաց մերոց սորա մահ ոչ գոյ:

«Իսկ չար էրէցքն կրկին աղաղակ բարձին և ասեն, թէ Բարձ զդա ի մէնջ, զի ազգն մեր խաղաղացի: Գարձեալ ասաց դատաւորն. Նաշէրի է բանս այս, ես ոչ կարեմ գիր տալ: Ապա նոքա բազում կաշառօք հաճեցան զփոս նորա. որ և պատրիարք Յովանէս վարդապետն բացեալ զկուրծն, կեղծաւորութեամբ ցու-

ցանէր զմագեղէնսն իւր դատաւորին, աւելով՝ թէ Որ ես զայս զգեցեալ եմ, մի թէ սուտ վկայութիւնս տամ: Եւ ապա յառաջ մատեանն եւ ի մի բերան ասացին. Արիւն դորա ի վերայ մեր եւ ի վերայ որդոց մերոց, իսկ վարձքն ընդ էւ ապա առեալ զհօճէթն ի դատաւորէն, բերեալ եղին զերանելին ի բանտ, և ինքեանք զնացին ուրախութեամբ ի զինարրուսն՝ ուտել և ըմպել, զխիլ և պարել. աւետիս տային միմեանց՝ թէ վաղինս սպանանելոց եմք զտէր կուսիտասն:

«Իսկ երանելի եւ սուրբ քահանայն Աստուծոյ՝ սիրովն Յիսուսի վառեալ, անդադար աղօթէր առ Աստուած, և առ ոչինչ համարէր զառաջակայ մահն վասն սիրոյ խաչեցելոյն: Իսկ ի լուսանալ ուրբաթի աւուրն հանեալ ի բանդէն՝ կացուցին առաջի ամիրային հանդերձ փաթըրբին և համախոհիւրն և արեանաբրու երկցամբքն, եւ մինչդեռ կամէին դատել, եկն սուրհանդակ մի եւս ամիրայն և ասէ. Կոչէ զընդ թագաւորն: Եւ նոյնժամայն փութացեալ ամիրայն՝ զնաց առ թագաւորն. և այն օրն մնաց առ թագաւորն և ոչ եկն մինչև յերեկոյ. և մնաց երանելին ի բանտն, իսկ ի բանտին ծուռը կրկնեալ արտասուօք՝ աղօթելով զայս ասէր. Ով տէր իմ Յիսուս՝ քաղցր և բարի, դու որ այսօր մեռար ի վերայ խաչին վասն իմ, արժանի արա զիս ըմպել զբաժակ չարչարանաց քոց:

«Եւ յետ աղօթելոյն ձայնէր զտէր կաւապետն, որ մականուամբ կոչէր Ճամճի օղլի. որ և նա ես բանտարկեալ էր անդ յաղագս այսմ իրի: Եւ առեալ զնա մեկուսի, և չոգեալ առաջի նորա, սկսաւ մտախոհ լինել և խոստովանել նմա զմեղս իւր մինչև ժամս երկուս: Եւ յետ խոստովանելոյն ճաշակեաց զմարմին և զարիւն տեառն մերոյ Յիսուսի. և յաւարտման զոհացողակոն աղօթիցն՝ սկսաւ բանալ զօրհնեալ բերանն իւր, և քարոզէր բանտարկելոցն աստուածային գրոցն, և մեկնէր զյառաջ բերեալ ճառս սրբոց մարտիրոսաց, և զպատմութիւնս նահատակաց, զփառս և զպատկա նոցին, զհանգրս-

տութիւն և զյարահրճութիւն նոցա: Զգիշերն ողջոյն ի քթել ական մի ոչ ննջէր, և ոչ դադարէր ի քարոզելոյ. մինչ զի յորդուէր զնոսա առ ի մարտիրոսութիւնն և ասէր նոցա. Պատուական է առաջի տեառն մահ սրբոց իւրոց: Զայս և զայլ տայնախիս ասելով՝ բորբոքէր ի սէրն Յիսուսի, և արտասուս շարժեալ՝ յօժարեցուցանէր զնոսա մեռանել վասն անուանն Գրիստոսի:

Եւ ի լուսանալ չորրորդ առաւօտին, որ էր օր շաբաթի և հոկտեմբերի ի Ե, տօն մեծի Դանիէտեան վկային, հանեալ ածին զնա առաջի ամիրային՝ հանդերձ երկցօքն և սևազլորն, մատուցին զգիր վճռոյ, այսինքն հօճէթն, և հրամայեաց զլիստեւ զնա: Դարձաւ սուրբն առ ամիրայն և ասէ. Այս սուտ վկայիւքս զանիրաւ դատս աւարիր, և սպանման վճիռս զոր հատուցիր ի վերայ իմ, ի յաւուրն արեղին յումմէ խնդրեցից զարիւն իմ. զի դու ես տէր յաշխարհինս Յայնժամ զարմացուցի կալաւ ամիրայն և որք ընթեր էին. կոչեաց զփաթիբն և զերեցուսն և ասէ. Անպարտ եմ ես յարեմէ դորա, իսկ նոքա աղաղակ բարձին և ասեն. Արիւն դորա ի վերայ մեր եւ ի վերայ որդւոց մերոց եղիցի: Զայնեալ ամիրայն զդահիճն՝ ետ ի ձեռն նորա, և դահիճն կապեալ պրկեաց զբազուկ սրբոյն ի յետս. և իլնուցեալ յաստիճանէ բեմբին, տանէր զլիստեւ:

«Կրկին ձայնեալ ամիրայն զդահիճն, և ասաց պատուիրելով. Եթէ զքահանայդ զայդ դարձուցանես ի հաւատս մեր, մեծամեծ պարգեւաց արժանացուցից զընդ էւ իլնեալ դահիճն՝ էառ զերանելին և եւ արտաքս. և եկին ի տեղին այն՝ որում էր զարպաս թագաւորին: Եւ թագաւորն ի վերուստ դիտէր ի վայր ի դահիճն հրամայէ սրբոյն խոնարհեցուցանել զպարանոցն՝ զի հատցէ զզուլին: Նոյնժամայն յառաջ մատեալ Հասան պաշին՝ համբուրեաց զալիք երանելոյն, և ասէր ողորջանօք. Խնայեա ի կեանս քո, զի դեռ քառասնամեա ես. ուրացիր և լեր ընդ մեր օրինացն. մեծամեծ պարգեւս առնուա իսկ երանելին ընաւ ոչ ետ պատասխանի առ

այն. այլ մտադրութեամբ աղօթէր և սաղ-
մոսէր, և զկարգ թաղման իւրոյ կատա-
նէր, և ասէր՝ Երանեալ են անքիծը ի
ճանապարհի և ոյք գնան յօրէնս տեառն:

«Եւ կացեալ աղօթիցն՝ ասէ զհահիճն.
Եւ զՔրիստոս ոչ ուրանամ, զի քրիստո-
նեայ եմ և Քրիստոսի ծառայ. Եւ դահիճն
յարոյց զնա, և առեալ տարին ի թշա-
տրօնն, ի տեղին կառափելոյ՝ որ կոչի
Պարմաք զափի. և հրամայեաց սրբոյն
չօղիլ յերկիր: Իսկոյն ոտիւքն և անձամբն
խաչակնքեալ զերկիր՝ չոգէր: Կրկնէ հա-
սաս պաշին և ասէ. Եկ տաճկացիք. ահա
ձեր մեծ կաթողիկոսն տաճկացաւ. խնայեմ
ի քեզ, որդւոց և զստերաց տէր ես, ան-
ձինդ մեծ փնաս առնես: Իսկ երանելին
պատասխանեալ ասէր. Թէ՛ զիս մաս մաս
կտրատէք, ոչ լինելոց է այդ, ի զիյնդ հա-
րամտր. արդ զինչ առնելոց էք՝ արարէք
վաղվազակի: Յայնժամ սրտմտեալ դահիճն
և վերացուցեալ զսուրն՝ էնատ ուժգին
զպարանոց սրբոյն և ընկէց ի գետնի:

«Եւ ի գիշերին յայնմիկ Լորէ ժամոյն
ծագեաց սիւն լուսոյ ի վերայ սուրբ մար-
մնոյն. և այնչափ պայծառացաւ սպիտա-
կափայլ տեսլեամբ մարմին նորա, մինչ
զի տեսողն անտանօր ապուշ մնային, և
զարմացմամբ հիացեալ ասէին. Որդարեւ
այս այս արդար և անմեղ էր: Եւ արդ,
եղբայրք, տեսէք, տեսէք զարմանալի
զհրաշն Սատուծոյ, զի երեք ամիս էր որ
անձրև ոչ գայր. թէպէտ բազում անգամ
ամպ լինէր, սակաւն ոչ անձրևէր. իսկ ի
կատարուեմ սրբոյն ցօղեալ զցօղ երկնից
ի վերայ մարմնոյ սրբոյն:

«Եւ մնացեալ մարմինն նորա զերիս տիւս
և զերիս գիշերս անդ: Եւ գնացեալ իւրա-
յինք ի լուսանալ երկուշարաթի առաւօտի
առ ամիրայն, և խնդրեցին բառնալ զմար-
մին սրբոյն: Իսկ անօրէնք և անագորոյնք
ազդ արարին ամիրային. Տուր մեզ հրա-
ման, ասեն, զի առցուր զմարմինն և ըն-
կեցցուր ի ծովն: Եւ ամիրայն բնա ոչ
լուաւ նոցա, այլ հրաման ետ՝ զի տարեալ
թաղեացն որպէս և կամին: Եւ յորժամ
եւ հրաման թաղել զմարմին սրբոյն, յայն-

ժամ զբո՛ւ տվեալ քրիստոնէից, հազարք
հազարաց և բիւրք բիւրոց, այլ և Յոյնք
և քահանայք իւրեանց, բարձին զմարմին
սրբոյն ի վերայ բազկաց իւրեանց, և բե-
րին ի դուռն սուրբ Սատուածածնի:

«Եւ պատրիարք Յովանէս վարդապետն
զագաղ ևս ոչ կամէր տալ. որ և երկու-
շաճք բռամբ առին և եղին անդ ի դագա-
ղի: Արդ տեսէք զնախանձ Հայոց պատ-
րիարգին, որ սպանանելովն ոչ շատացաւ.
այլ ոչ ետ թոյլ քահանայիցն՝ կատարել
զկարգ թաղման հրանելոյն: Կասն որոյ
լուեալ Յունաց պատրիարգն, հրաման ետ
մետրօպօլտաց և քահանայից իւրոց, որք
եկին զկնի սուրբ մարմնոյն ինկօք և մո-
մեղինօք, և անուշահոտ բուրմամբք, քաղցր
եղանակօք, սաղմոսիւք և օրհնութեամբ և
երգօք հոգեւորօք: Եւ մինչ թաղէին Հայք՝
երգէին Յոյնք. զոր եղին պատուով ի գե-
րեզմանս Հայոց՝ որ կոչի Պալլըլը: Յորմէ
բազում նշանք և հրաշք լինին յայտնա-
պէս ի տապանէ սրբոյն՝ առ խառամէտս,
ի պէսպէս ցաւազնեալս և ի նեղեալս, ի
փառս Քրիստոսի Սատուծոյ մերոյ օրհնե-
նելոյն յաւիտեանս. ամէն:

«Եւ արդ, եղբայրք, զիմորդ ոչ զովեա-
ցուր զերանելի սուրբս զայս, որ ի վեր
է քան զգովութիւնս: Չտէր կուսիտասն
ասեմ, զգիտունս ի քահանայից և զվմաս-
տունս ի վարդապետաց, Չտէր կուսիտասն
ասեմ, զհոչակեալն զեղեցկութեամբ, զշա-
ռաւիղեալն ի յազնիւ զարմէ: Չտէր կու-
սիտասն ասեմ, զվայելչութիւն մարտիրո-
սաց և զպարծանքն նահատակաց, ուրա-
խութիւն հրեշտակաց և զահարկուն դիւաց:
Չտէր կուսիտասն ասեմ, ինքնանուէրն Սա-
տուծոյ, զընծայն Յիսուսի և զսիրողն
Քրիստոսի: Չտէր կուսիտասն ասեմ, զմա-
քուր խորհուրդն, զառաքինասէր հոգին և
արիարար պատերազմօղն, և հակառակա-
մարտից յաղթօղն:

«Չտէր կուսիտասն ասեմ, զպտղաբեր
ձիթենին և քաղցրապտուղ արմաւենին:
Չտէր կուսիտասն ասեմ, զբարձրաթոփչ
արծուին և զքաղցրախօս աղաւնին: Չտէր
կուսիտասն ասեմ, արդար իբրեւ զարա-

գիշին և ողջախոհ իրրև գտատրական: Չտէր կուսիտասն ասեմ, զամբիծ վարքն և զն. բարոյս ծաղիկն: Չտէր կուսիտասն ասեմ, զաղբերն գիտութեան և զառոգանողն ծա. բաւելոց: Չտէր կուսիտասն ասեմ, զարդն եկեղեցւոյ և զպարծանքն ուղղափառաց: Չտէր կուսիտասն ասեմ, զաստուածահան. զոյ զմիտն և զանդամանդեա պնդութիւնն:

« Չտէր կուսիտասն ասեմ, զտաճարն Հոգւոյն սրբոյ և զհանգստարանն Քրիստոսի, զանփոփոխելի կամբն, որ այնքան սէր աշխարհիս և սէր ընտանեաց և որդւոցն առ թշնչ համարեցաւ, ասելով ըստ առաքելոյն. Որով աշխարհս ինձ ի խաչ ելեալ է և ես աշխարհի: Ասելովն զօրացեալն էր Հոգւով սրբով, և ժուժկալութեամբ յարատեւէր ի սէրն Աստուծոյ. և անխոսարհելի ունէր զմտացն գիտաւորութիւն իւր որ առ Աստուած մինչև ցկատարած. որով արիարար ժուժկալութեամբ վկայական մահուամբ գլխատեցեալ ի կոստանդինուպոլիս, կատարեցաւ ի Քրիստոս, և ի նմանէ պսակեցաւ ի փառս ամենամեծի անուան Քրիստոսի Աստուծոյ մերոյ, Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի, և մաքուր ազօթիւք սորին մեզ և ամենայն հաւատացելոց ողորմեցցի. ամէն »:

Հրարկ. Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

Միութիւնն ու պարզութիւնը՝ գեղեցկութեան երկու հրաշալի աղբիւրներն են:

ՇԽԼԷՐ

Առանձնութիւնը կը զարգացնէ բարձր ոգիները, բայց կը տխրեցնէ միջակները:

ԱՆՍԻԼԼՈՆ

Գիտութիւն առանց խնձի՝ կործանումն է հոգւոյ:

ՌԱԳԸԼԷ

Ամենէն մեծ արժանիքն հոն կ'ունենանք՝ երբ զմեզ բանէ մը կը զրկենք:

ԼԱ ՌՈՇՈՒԳՈՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ԶԵՆԱԳԻՐՆԵՐ

ԼՈՆՏՈՆԻ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԹԱԵԳԱՐԱՆՈՒՄ

(Շար. տես Բզմ. 1923. էջ 101)

Ի վերջ ամենայնի՝ ահա յառաջի ածեմք Հայկական Հին Զեռագիրների սիրողաց, սուրբ Աւետարանիս կարի հետաքրքրական երկու յիշատակարաններն:

Յիշատակարան Առաջին. «Փառք անըսկըզբանն և սկզբանն ամենայնի, անեղին և զոյացուցչին բնաւից անվախճան և անսահման էացուցչին, սահմանիչ և կատարումն բոլոր էկցս, երիցս միակին, եզակի և միում աստուածութեանն: Որ անշարժ գոլով՝ շարժէ զարարածս ի կեանս և ի փրկութիւն. էկցս է ակն և կենդանեաց կեանք. որ անփոփոխ գոլով միշտ յէութեան, անեղբ և անվայրափակն: Լըրումն և բովանդակիչ ամենայնի: Եւ յամենայնս է՝ և յամենայնէ անհաս: Որպէս ի մատունս և ի բոլորս. և ինքն ո՛չ մասն և ո՛չ բոլոր՝ որպէս թէ՛ զմասն և ըզբոլոր. զամենայն ինքն ունենալով. և կրէ զամենայն բանիւ զօրութեան իւրոյ: Գե. բալիբ գոլով ընու փո՛ւ: Որում բան և իմաստութիւն և լեզու տունեալ բոլոր էկցս ի բոլոր էկցս հանցուք զարհնութիւն և զփառս Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ՝ այժմ և մ՛շ:

« Իսկ չորից աւետարանչացն խորհուրդ բազմօրինակ իմն ցուցմամբ տեսանի: Զի ոմանք ասեն, թէ չորից աւետարանչացն են օրինակ՝ չորք անկիւնք արարածոց: Արեւելք, Արեւմուտք, Հիւսիս, Հարաւ: Պարտ էր քարոզել զաւետարանն: Իսկ ոմանք հաճոյ թուեցաւ ըստ չորից մշտահոս գետոցն Յաղենական յաղբերէն յառաջ խաղացեալ, առ ի տիեզերաց առու գումն: Փիսոն որ նշանակէ զՄատթէոս, և

1. Ինչ յայտնի չէ Բնչ նշանակէ այս կրճատութեամբ. թէ՛րիս աշխարհ:

2. Մ. կարծեմ միշտ: